Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն 3

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներքին աուդիտի կոմիտեի նիստի

22.12.2014թ. | ք. Երևան
Ժ. 11.00 | ՀՀ ԱՍՀՆ նիստերի դահլիճ

Նախագահում էր
Կոմիտեի նախագահ՝ Ա. Ասատրյանը

Մասնակցում էին
Կոմիտեի անդամներ՝ Ս.Հարությունյանը, Ֆ. Բերիկյանը, Ջ. Բաղդասարյանը, Ա. Գրիգորյանը, Ս. Տերտերյանը,

Բացակայում էին՝ Ա. Պետրոսյանը, Ն. Սարգսյանը, Դ. Համբարձումյանը

Հրավիրված էին՝ Է. Գևորգյանը, Դ.Հակոբյանը, Ա. Մանվելյանը, Վ. Աբազյանը, Լ. Հայրապետյանը, Ա. Եղիազարյանը, Ա. Թանաշյանը, Ա. Գևորգյանը, Ա. Ավետիսյանը, Ա. Բարսեղյանը, Ն.Վիրապյանը, Գ. Իսրայելյանը, Ա. Հարությունյանը, Հ.Ներսիսյանը, Ա. Խաչատրյանը

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար, կոմիտեի նախագահ Ա. Ասատրյանը նիստի սկզբում հղում անելով օրակարգում ընդգրկված և աուդիտի բաժնի կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում կազմված հաշվետվություններին՝ հստակեցրեց մասնակիցների կողմից դրանց վերաբերյալ ունեցած առաջարկությունները: Մասնակիցների կողմից օրակարգի վերաբերյալ առաջարկություններ չհնչեցին, որի արդյունքում ներքին աուդիտի կոմիտեն միաձայն **ՈՐՈՇԵՑ** հաստատել 2014 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներքին աուդիտի կոմիտեի նիստի հետևյալ օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներքին աուդիտի կոմիտեի 22.12.2014թ. նիստի

1. Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի ծախսերի գործառնական դասակարգման 10 բաժնի 02 խմբի 01 դասի «07. Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ» ծրագրի շրջանակներում իրականացված ներքին աուդիտի արդյունքների մասին:

(Զեկուցող ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Ս. Տերտերյան)

2. Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի ծախսերի գործառնական դասակարգման 10 բաժնի 01 խմբի 02 դասի «05. Մտավոր խնդիրներ ունեցող հաշմանդամ դեռահասների և երիտասարդների սոցիալ-վերականգնողական ծառայություններ» ծրագրի շրջանակներում իրականացված ներքին աուդիտի արդյունքների մասին:

(Զեկուցող ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Ս. Տերտերյան)

3. Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի ծախսերի գործառնական դասակարգման 10 բաժնի 09 խմբի 02 դասի «14. Թրաֆիկինգի զոհերի սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայություններ» ծրագրի շրջանակներում իրականացված ներքին աուդիտի արդյունքների մասին:

(Զեկուցող ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Ս. Տերտերյան)

4. «Կապանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում իրականացված ներքին աուդիտի արդյունքների մասին:

(Զեկուցող ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Ս. Տերտերյան)

1. Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեյի ծախսերի գործառնական դասակարգման 10 բաժնի 02 խմբի 01 դասի «07. Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ» ծրագրի շրջանակներում իրականացված ներքին աուդիտի արդյունքների մասին:
(Ա. Ասատրյան, Ս. Հարությունյան, Ջ.Բաղդասարյան,Ա.Գևորգյան)

Ս. Տերտերյանը ներկայացնելով օրակարգի 1-ին հարցը անդրադարձավ «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ՊՈԱԿ) կողմից իրականացվող "Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ" ծրագրի շրջանակներում իրականացված ներքին աուդիտի արդյունքներով արձանագրված թերություններին: Ս. Տերտերյանը մանրամասնորեն ներկայացրեց ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ծառայությունների մատուցման ծրագիրը՝ մասնավորապես անդրադառնալով աշխատանքային թերապիայի կազմակերպման հիմնահարցերին՝ մասնավորապես յուրաքանչյուր շահառուի վիճակից բխող առանձնահատկություններին համապատասխան ցերեկային կենտրոնում զբաղվածության ապահովմանը (մոզաիկա, նկարչություն, գոբելեն, մաքրամե, կավագործություն, ապլիկացիա, ասեղնագործություն, կար ու ձև, շյուղագործություն, փայտամշակում, կոշիկի վերանորոգում, ծաղկանոցի մշակում և այլն): Ս. Տերտերյանը նշեց, որ վերը նշված ծառայությունները մատուցվում են այդ ծրագրի համար ՊՈԱԿ-ում նախատեսված 3 սենյակներում, որի ոչ բավարար պայմանները խոչնդոտ են հանդիսանում ծառայությունների ամբողջական կազմակերպման և իրականացման համար: Ի հավելումն, ՊՈԱԿ-ի տնօրեն Ա.Հարությունյանը նշեց, որ ծառայությունները նշված սենյակներում մատուցվում են ցերեկային տարբեր ժամերի՝ մասնավորապես ժամը 9^{30}-13^{00}-ն ընկած ժամանակահատվածում սպասարկվում են Վարդենիսի մոտակա գյուղերի հաճախորդները, իսկ ժամը 13^{00}-16^{00}-ը՝ Վարդենիս քաղաքի բնակիչները: Ծառայությունների մատուցումն վերոնշյալ ժամերի տարբերակման արդյունքում նշված սենյակները բավարարում են ցերեկային խնամքի ծառայություն մատուցելու համար:

Վերը նշված ծառայությունների մատուցման շրջանակներում իրականացվող ծրագրի ներքո առարկայական արդյունք ապահովելու կամ որակական բնութագրիչներ ներկայացնելու վերաբերյալ նախարարի հարցադրմանն ի պատասխան Ա.Հարությունյանը պարզաբանեց, որ այն հիմնականում ապահովում է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց զբաղվածությունը՝ արդյունքում նպաստելով նաև վերջիներիս ընտանիքի անդամների և զբաղվածության խնդիրների կարգավորմանը:

Այնուհետև ՀՀ ԱՍՀ նախարարի տեղակալ Ջ. Բաղդասարյանը հավելեց, որ վերոնշյալ թերապիան նպաստում է նաև հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց սոցիալ-վերականգնողական խնդրի լուծմանը, որի արդյունքում հնարավոր

կլինի կանխարգելել շահառուների այցը «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ :

“Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ” ծրագրի շահառուի կարգավիճակ ստանալու իրավական հիմնավորվածության վերաբերյալ նախարարի հարցադրմանն ի պատասխան հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության պետի տեղակալ Ա. Գևորգյանը պարզաբանեց, որ ցերեկային կենտրոն ուղեգրվում են հոգեբույժի եզրակացության հիման վրա՝ հաշվի առնելով անձի հոգեկան առողջության աստիճանը/թեթև,միջին,ծանր/:

Նախարարն առաջարկեց «Փրկություն» ԲՀԿ-ի նախագահ Ա.Աբրահամյանին ներկայացնել իր տեսակետը վերոնշյալ խնդիրների լուծման կապակցությամբ: Վերջինս ներկայացրեց ԲՀԿ-ի կողմից այդ աշխատանքների իրականացման ընթացակարգը: Ըստ Աբրահամյանի, ԲՀԿ-ում աշխատող հատուկ մանկավարժ, սոցիալական աշխատող, հոգեբան, հոգեթերապիստ և լոգոպետ մասնագետների ներգրավմամբ կազմված բազմամասնագիտական աշխատանքային խմբի կողմից իրականացվում են հետազոտություններ, որի արդյունքում տրվում է համապատասխան եզրակացություն /ուղորդում/:

Այնուհետև Ս. Տերտերյանն անդրադարձավ ՊՈԱԿ-ի կողմից մատուցվող “դասընթացների կազմակերպում (տառաճանաչություն, թվաբանություն, հայոց լեզու)՝ համապատասխան շահառուների անհատական կարողությունների և նախասիրությունների” ծառայությունների վերաբերյալ խնդրին և նշեց, որ նշված ծառայության համար ՊՈԱԿ-ի հաստիքացուցակով համապատասխան մանկավարժ նախատեսված չէ, հետևաբար ծառայությունը մատուցվել է թերի (նույն դիտողությունը վերաբերվում է նաև աշխատանքային թերապիայի ծրագրին):

Ս. Տերտերյանը ներկայացրեց նաև, որ ՊՈԱԿ-ում արձանագրված է նաև թերություններ գնումների գործընթացում: Այն է՝ մեկ շահառուի հաշվով մեկ օրվա միջին օրական ծախսը 2013 թվականի համար նախատեսվել էր 331 դրամ (տվյալ դեպքում օրական ծախսը բաղկացած է միայն սննդի ծախսից), իսկ փաստացի ծախսը՝ ըստ տարեկան միջին հաշվարկի, կազմել է 175 դրամ (ինչը տարվա կտրվածքով կազմել է 509,6 հազար դրամ), այսինքն ցերեկային կենտրոն այցելող հոգեկան առողջության խնդիրներ ունեցող մեկ շահառուի հաշվով 2013 թվականի արդյունքներով մեկ օրվա միջին օրական ծախսը թերակատարվել է 156 դրամով:

Աշխատակազմի ղեկավար Ա. Գրիգորյանի հարցադրմանը՝ դա դիտարկել որպես թերակատարում թե տնտեսում, ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության պետ Ա. Մանվելյանը պարզաբանեց, որ դա ոչ թե թերակատարում է, այլ տնտեսում: Ս. Տերտերյանը առարկեց, որ համաձայն 2011թ փետրվարի 10-ի “Գնումների գործընթացի կազմակերպման մասին” ՀՀ կառավարության N 168-Ն որոշմամբ գործող կարգի 15%-ից ավելի շեղման դեպքում այն համարվում է թերակատարում կամ սխալ պլանավորում:

Ս. Տերտերյանը ներկայացրեց նաև հաշվետվությունում արձանագրված ՊՈԱԿ-ի կողմից մատուցվող ծառայությունների շրջանակում ցերեկային կենտրոնի աշխատակիցների կողմից շահառուներին տուն այցերի իրականացման համար նախատեսված գումարների ոչ նպատակային ծախսման վերաբերյալ խնդիրը: Մասնավորապես նշեց, որ նախատեսված գումարները աշխատակիցներին չեն տրամադրվել, փոխարենը՝ ծախսվել են ՊՈԱԿ-ի շահառուներին տեղափոխող տրանսպորտային միջոցի համար վառելիքի գնման նպատակով:

Ջ.Բաղդասարյանը նշեց, որ տեղյակ է խնդրին և անդրադարձել է նախնական քննարկման ժամանակ, ըստ որի առաջարկեց ՊՈԱԿ-ի աշխատակիցների կողմից շահառուներին տուն այցերի իրականացման համար նախատեսված գումարները կոնկրետ նպատակին ծախսելու համար սահմանափակել ընտանիքում գտնվող հոգեկան առողջության խնդիր ունեցող շահառուների թվաքանակը՝ միաժամանակ ավելացնելով ցերեկային խնամքի կենտրոնում սպասարկվող շահառուների քանակը:

Ա.Ասատրյանը «Փրկություն» ԲՀԿ-ի փորձին ծանոթանալով նշեց, որ «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի և «Փրկություն» ԲՀԿ-ի կողմից մատուցած ծառայությունները բովանդակային առումով համարժեք են և անհրաժեշտ է մշակել համապատասխան իրավական ակտի նախագիծ՝ նույնականացնելով երկու կազմակերպությունների միջոցով մատուցվող ծառայությունները:

Ս.Տերտերյանը ներկայացրեց նաև հաշվետվությունում որպես բացթողում արձանագրված ՊՈԱԿ-ի թվով 6 խնամվողների "Սոցիալական պաշտպանության ծրագրերում ընդգրկված տարեցների հաշվառման" տեղեկատվական համակարգում ընդգրկված չլինելու խնդիրը: Ջ.Բաղդասարյանը հիմնավորեց, որ ՀՀ կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 7-ի «Ծեր և հաշմանդամություն ունեցող քաղաքացիներին խնամքի տրամադրման կարգն ու ծեր և հաշմանդամություն ունեցող քաղաքացիներին խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկը հաստատելու մասին» N 1874-Ն որոշման մեջ առկա են անհամապատասխանություններ՝ կապված հաշմանդամ ճանաչված և հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց հաշվառման հետ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն որոշման լիազոր մարմինը հանդիսանում է ՀՀ ԱՍՀ նախարարությունը, նախարարն առաջարկեց, որ խնդիրը անհրաժեշտ է կարգավորել ՀՀ կառավարության 1874-Ն որոշման մեջ համապատասխան փոփոխություններ կատարելու համատեքստում:

Ս.Տերտերյանը նշեց նաև, որ ծառայությունների մատուցման ծրագրում բազմամասնագիտական խումբը լիարժեք կազմավորված չէ՝ պայմանավորված բուժ աշխատողի և իրավաբանի հաստիքներով: Ա.Գևորգյանը պարզաբանեց, որ ցերեկային կենտրոնն ընդգրված է «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի կառուցվածքում, որի արդյունքում ՊՈԱԿ-ի բուժ աշխատողի ու

իրավաբանի կողմից ծառայություն է մատուցվում նաև ցերեկային կենտրոնի շահառուներին, որն էլ սահմանված է ծառայությունների նկարագրում:

Հարցի քննարկման ընթացքում արձանագրվեց, որ անհրաժեշտ է.

- 2015 թվականի ծրագրում անհամապատասխանություններից խուսափելու նպատակով վերանայել "Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ" ՊՈԱԿ-ի ցերեկային կենտրոնի մասնագետների պաշտոնների անձնագրերը՝ դրանք համեմատելով և համապատասխանեցնելով փաստացի մատուցված ծառայությունների նկարագրերի հետ, անհարժեշտության դեպքում ներկայացնել առաջարկություններ պաշտոնների անձնագրերում համապատասխան փոփոխություն կատարելու համար:
- Ուսումնասիրել «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի և "Փրկություն" ԲՀԿ-ի կողմից մատուցվող ծառայությունների նկարագրերը, հաշվի առնելով երկու ծառայությունների ընդհանրական մոտեցումները, ապահովել նույնականացում՝ անհրաժեշտության դեպքում ներառելով "Փրկություն" ՀԿ-ի հետ կնքված պայմանագրի ծառայությունների նկարագրում առկա դրույթներն ու առանձնահատկությունները:
- Ներկայացնել առաջարկություն "Սոցիալական պաշտպանության ծրագրերում ընդգրկված և խնամք ստացող տարեցների ու հաշմանդամների հաշվառման տեղեկատվական համակարգ"-ի տեխնիկական առաջադրանքում փոփոխություն կատարելու վերաբերյալ՝ հստակ ամրագրելով հաշմանդամություն չունեցող, բայց հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց վերաբերյալ դրույթը:
- Մշակել և ներկայացնել ՀՀ կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 7-ի «Ծեր և հաշմանդամություն ունեցող քաղաքացիներին խնամքի տրամադրման կարգն ու ծեր և հաշմանդամություն ունեցող քաղաքացիներին խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկը հաստատելու մասին» N 1874-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ՝ հաշմանդամություն ունեցող անձանցից տարանջատելով հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց խնամքի տրամադրման կարգն ու պայմանները:
- Ներկայացնել եզրակացություն ՊՈԱԿ-ում առկա “Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ” ծրագրով նախատեսված մեկ շահառուի հաշվով մեկ օրվա միջին օրական սննդի ծախսի թերակատարման վերաբերյալ:
- Նախապատրաստել ՊՈԱԿ-ների հետ սուբսիդիայի պայմանագրերը՝ նախահաշվային գների փոխարեն հաշվի առնելով մրցույթների արդյունքներով (փաստացի ցուցանիշներով) ամրագրված գները՝ (եթե արդեն իսկ առկա են այդ մրցույթների արդյունքները):

2. Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի ծախսերի գործառնական դասակարգման 10 բաժնի 01 խմբի 02 դասի «05. Մտավոր խնդիրներ ունեցող հաշմանդամ դեռահասների և երիտասարդների սոցիալ-վերականգնողական ծառայություններ» ծրագրի մասով իրականացված ներքին աուդիտի արդյունքների մասին:

(Ա. Ասատրյան,Ս.Հարությունյան, Ջ.Բաղդասարյան, Ա.Գևորգյան, Ա. Մանվելյան):

Ս.Տերտերյանը ներկայացնելով օրակարգի 2-րդ հարցը, անդրադարձավ ուսումնասիրության արդյունքում աուդիտորական հաշվետվությունում արձանագրված "Մտավոր խնդիրներ ունեցող հաշմանդամ դեռահասների և երիտասարդների սոցիալ-վերականգնողական ծառայություններ" ծրագրին: Նա մասնավորապես նշեց, որ շահառուների «Փրկություն» ԲՀԿ ուղեգրման գործընթացը կարիք ունի վերանայման և առաջարկեց այն կազմակերպել սոցիալական ծառայությունների տարածքային մարմինների միջոցով: «Փրկություն» ԲՀԿ-ի նախագահ Ա. Աբրահամյանը առարկեց՝ նշելով, որ ԲՀԿ-ն շենքային պայմաններից ելնելով կարող է ծառայություն մատուցել առավելագույնը 66 շահառուի՝ նախատեսված 50-ի դիմաց և առաջարկությունն ընդունելու դեպքում ԲՀԿ կուղեգրվեն մեծ քանակությամբ շահառուներ, որոնց ծառայություններ մատուցել հնարավոր չէ: Ա. Ասատրյանը պարզաբանեց, որ անհանգստանալու որևէ առիթ չկա և դա սոցիալական պաշտպանության ոլորտում կիրառվող ընթացակարգ է և համահունչ է ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի գաղափարախոսությանը, այսինքն, սոցիալական աշխատողները կատարում են կարիքների գնահատում և արձանագրում համապատասխան կարիքը, իսկ ուղեգրման գործընթացը գտնվում է նախարարության վերահսկողության ներքո: Այնուհետև «Փրկություն» ԲՀԿ-ի նախագահ Ա. Աբրահամյանը դիմեց նախարարին՝ խնդրելով միջնորդել Երևանի քաղաքապետին հնարավորության սահմաններում մարելու կազմակերպության կոմունալ ծախսերի շուրջ 6 միլիոն ՀՀ դրամի չափով պարտքը, որի վերաբերյալ հանձնարարական էր տրվել նաև ՀՀ վարչապետի կողմից:

Հարցի քննարկման ընթացքում արձանագրվեց, որ անհրաժեշտ է.

- Ապահովել «Փրկություն» ԲՀԿ-ի կողմից տեղեկատվական շտեմարան տվյալների մուտքագրման հասանելիությունը:

3. Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի ծախսերի գործառնական դասակարգման 10 բաժնի 09 խմբի 02 դասի «14.Թրաֆիկինգի զոհերի սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայություններ» ծրագրի մասով իրականացված ներքին աուդիտի արդյունքների մասին:

(Ա. Ասատրյան,Ս.Հարությունյան, Ֆ. Բերիկյան, Ա. Թանաշյան, Ն. Վիրաբյան, Ա. Մանվելյան):

Ս. Տերտերյանը ներկայացրեց 3-րդ հարցը "Թրաֆիկինգի զոհերի սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայություններ» ծրագրի մասով իրականացված ներքին աուդիտի արդյունքների մասին աուդիտորական հաշվետվությունը: Վերջինս նշեց, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից սույն ծրագիրը ֆինանսավորվում է 6 միլիոն ՀՀ դրամի չափով (միայն վարձակալության համար), միաժամանակ շեշտվեց, որ ծրագրի որոշ ընթացակարգեր հրապարակման ենթակա չեն թրաֆիքինգի ենթարկված անձանց հետագա խնդիրներից և բարդություններից զերծ պահելու նպատակով:

Ս. Տերտերյանը նշեց նաև, որ ծրագիրը սպասարկող մասնագետների պաշտոնի անձնագրերով սահմանված չէ նման գործառույթ, իսկ ծրագիրը չունի ծառայությունների մատուցման նկարագիր:

Ֆ. Բերիկյանը հավելեց, որ արդեն իսկ շրջանառության մեջ է դրվել Թրաֆիքինգի զոհերի սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայությունների մասին ՀՀ օրենքի նախագիծը:

Հարցի քննարկման ընթացքում արձանագրվեց, որ անհրաժեշտ է.

- Թրաֆիքինգի ծառայությունների մատուցման շրջանակում տեղեկատվության փոխանակման գաղտնիությունն ապահովելու նպատակով մշակել համապատասխան ընթացակարգ:
- "Թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին" ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելուց հետո կազմել օրենքի կիրակումն ապահովող ենթաօրենսդրական ակտերի ցանկը:

4. «Կապանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում իրականացված ներքին աուդիտի արդյունքների մասին:

(Ա. Ասատրյան,Ս.Հարությունյան, Ֆ. Բերիկյան, Է. Գևորգյան, Ա. Մանվելյան):

Ս.Տերտերյանը ներկայացնելով օրակարգի 4-րդ հարցը, անդրադարձավ ուսումնասիրության արդյունքում աուդիտորական հաշվետվությունում արձանագրված «Կապանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ի կողմից սննդի կազմակերպման կարգի վերաբերյալ խախտումներին և բացթողումներին:

Ս.Հարությունյանն առաջարկեց ՊՈԱԿ-ներում մշակել ճաշացուցակ հաստատելու համապատասխան ընթացակարգ և առաջնորդվել սահմանված կարգով:

Ներկայացված առաջարկությանն ի պատասխան, նախարարը նշեց, որ անհրաժեշտ է նախարարության կողմից մշակել համապատասխան ընթացակարգ՝ հստակ ամրագրելով հիմնական սկզբունքային դրույթները, որը հիմք ընդունելով յուրաքանչյուր խնամքի հաստատություն իր առանձնահատկություններից ելնելով կհաստատի իր սննդի կազմակերպան ներքին ընթացակարգը: Հարցի քննարկման ընթացքում արձանագրվեց, որ անհրաժեշտ է.

- Մշակել հրամանի նախագիծ ՀՀ ԱՍՀՆ ենթակայությամբ գործող խնամքի հաստատություններում սննդի կազմակերպման ընթացակարգի (հանգուցային դրույթներ, պատասխանատուներ, քայլերի հերթալանություն և այլ) վերաբերյալ՝ ՊՈԱԿ-ների ներքին ընթացակարգը հաստատելու և սահմանված կարգով առաջնորդվելու համար:

- Մշակել հրամանի նախագիծ ՀՀ ԱՍՀ նախարարի 2007թվականի փետրվարի 1-ի 21-Ա/1 հրամանով հաստատված կարգում փոփոխություններ կատարելու մասին:

ՀԱՆՁՆԱՐԱՐՎԵՑ

Ներքին աուդիտի բաժնի պետ Ս. Տերտերյանին՝ արձանագրված խնդիրների լուծման նպատակով նախապատրաստել համապատասխան հրամանի նախագիծ:

Կոմիտեի նախագահ՝ Ա. ԱՍԱՏՐՅԱՆ

Կոմիտեի անդամներ՝ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ֆ. ԲԵՐԻԿՅԱՆ

Ջ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ս. ՏԵՐՏԵՐՅԱՆ